

տի զրկուին հայագէտներու, որոնց կարծիքները քննելով՝ Յանձնաժողովը պիտի վճռէ ուղղադրութեան հարցը:

Ի՞նչ բանի համար հայ կառավարութիւնը այսքան ծախքեր կ'ընէ, ժամավաճառ կ'ըլլայ, հայ ազգին հողին կը քաղէ... մէկ բողբոջի մէջ գործուած սին՝ քրէիքուր սճիր մը ինչո՞ւ մէկ բողբոջի մէջ Աղեքսանդրեան սուրով չի՛ ջարդեր, չի՛ բրդեր... Մեր ուղղադրութեան մէջ ի՞նչ սխալ կայ՝ որ այդ Յանձնաժողովը սըրբազրելու է ելեր...

Մեր աստուածարեալ նախնիքը՝ որ մեզի տունն մեր գիրը, որ այդ նորագլուտ գրով կերտեցին մեր ազգին փառքն ու պարծանքը համայն աշխարհի առջեւ, մեր հըրաշալի լեզուն, ու տունն մեզի՛ ի միջի այլոց՝ Աստուածաշունչի պէս աստուածային գիրք մը, թագուհին բոլոր թարգմանութեանց՝ ինչպէս ըսին եւրոպացիք. եւ Աստուած՝ եթէ իրաւցնէ խօսեր է Աղամին հետ՝ խօսեր է ոչ թէ յունական լեզուածայր փատարձադիկ ծեփեհայով, կամ Վուլկադայի սափակ լատիներէնով, այլ միայն մե՛ր, մեր հրաշալի լեզուով... Արդ՝ դուք ո՞վ էք, բայց ո՞վ էք դուք որ նստեր էք հող Երեւանում, ու պիտի սրբազրէք հմուտ, իմաստուն, ներշնչուած այդ սուրբերուն սրբանուէր ուղղադրութիւնը, այսինչ գիրը փրցնէք նեւէք, այսինչ գիրը փոխէք, լեզուական այսինչ օրէնքը այլանդակէք. եւ որո՞վ իշխանութեամբ, ի՞նչ օրէնքով, ի՞նչ կրօնքով... Թուրք առածը կ'ըսէ. «Էօգրիւ գասպահաթնաման պէօյիւք», եւ կարծեմ ճիշդ տեղն է հոս:

Եւ «օտար»ներու այս դիմումն ի՞նչ է. ինչո՞ւ անոնց պիտի զրկուին այդ որոշումները: Օտարը ի՞նչ կը հասկնայ մեր լեզուէն, մեր ցաւէն: Մենք շատ ենք տեսեր այդ «օտար»ներէն, որոնց հայերէն զխոցածին տասնապատիկը աւելին գիտենք իրենց լեզուն, բայց անոնցմէ ո՞վ մենէ խորհուրդ հարցուց իրենց լեզուական խնդիրներուն մէջ: Հայու արիւն պէտք է ունենայ մարդ, եւ հարագա՛տ արիւն, որպէս զի զգայ մե՛ր զգացումը, մե՛ր ցաւը: Անոնց միջամտութիւնը ո՛չ միայն օգտակար չէ, այլ վնասարեք, աղիտարեք մանաւանդ, ինչպէս փորձը ցուցուց: Այդ «օտար»ներէն մէկուն միջամտութեամբն էր որ այդ պղծութիւնը գոր-

ծրեցաւ, եւ այսքան աղէտներու պատճառ եղաւ: Մենք շատ հաւատարի աղբիւրէ գիտենք որ Արեղեան տխրահռչակ աւերածը մէ՛կ քուէի առաւելութեամբ յաղթանակեր է, եւ այդ մէկ քուէն հայ երեւմտական գործավարինն է եղեր, որ փարսախներով հեռու է «հայ» ըլլալէ: Մեասնիկեանն ինք հակառակ կողմն է եղեր... Հիմա՞ ալ արդեօք ա՛յդ նպատակաւ կը գիմուի օտարներու...:

Յայտարարութիւնը կարգալ սկսելէ առաջ՝ պատշաճ կը համարիմ երկու բառով պատասխան տալ անոնց, որոնք կ'ըսեն թէ լեզուի փոփոխութիւնն չէ որ կ'ըլլուի, այլ բառի, գրութեան, ձեւի:

Բառը ոչ միայն հնչիւններով իմաստ արտայայտելու միջոց մըն է, այլ նաեւ պատմական իրականութիւն է, եւ իբր այդպիսի՝ ունի իր որոշ կեանքը եւ զարգացման ուղին: Իր արմատները մխրճուած են խոր անցեալին մէջ, ինչպէս բոյսերու արմատները հողին տակ. իր աճման ձեւերը ենթարկուել են պատմական որոշ օրէնքներու, հասունցեր են ժողովուրդէն արտացոլուած լոյսերու տակ, զարգափարի ջերմութեան եւ ուրիշ զանազան ազդակներու ազդեցութեամբ: Ու բառը, ինչպէս բոյսը, ոչ միայն զարգափար է, ոչ միայն բովանդակութիւն է, այլ նաեւ՝ ձեւ է, պատկեր է, նըշան է: Եւ ինչպէս չէ կարելի փոխել ծաղիկներու ձեւը, կարելի չէ նոյննման փոխել բառերու ձեւը, առանց վիրաւորելու իմաստը: Այդպէսով ուղղադրական հարցը գերազանցօրէն լեզուական հարց է:

Յայտարարութեանէն կ'իմանանք որ Յանձնաժողովի անդամներն են պարոնայք Աճառեան, Խաչատուրեան, Ղափանցեան, եւ Մալխասեան: Կատարուած փոփոխութեանց մէջ իրենց միաձայն հաւանութիւնը կայ:

Ի՞նչ կ'ըսեն ուրեմն այս ուսուցչապետները:

1. Ի գիրը պահել բառերու սկիզբը եւ բարդութիւններու մէջ (էգ, էգութիւն (ծանօթ էջ այդ ուսուցչապետներուն որ հայ լեզուն ատանկ այլանդակ բառ չունի), Խախարն, էքրսպէրտ (հայ լեզուն երկու բաղաձայնէ առաջ է չընդունիր, անէանալ). նոյնպէս բառերու մէջ, ձայնաւորներէ առաջ (բողբոջական, մար-